

Հաստատված է՝

«ՀՈՒՄԿ» ԿՀ Գիտական խորհրդի

2017թ. դեկտեմբերի 12-ի թիվ 4 նիստում

«ՀՈՒՄԿ» ԿՀ Գիտական խորհրդի նախագահ՝

_____ *Հ.Մ. Սահակյան*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1 Ընդհանուր դրույթներ

1.1 «ՀՈՒՄԿ» ԿՀ-ում գործում է մասնագիտության կրթական ծրագրի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների ձևավորման ու բաշխման քաղաքականություն:

1.2 «ՀՈՒՄԿ» ԿՀ-ն իր առաքելության մեջ խնդիր է դնում զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, տեխնիկական միջոցները, էլեկտրոնային գրանդարանը:

1.3 «ՀՈՒՄԿ» ԿՀ-ի ֆինանսական կայուն գործունեության և անհրաժեշտ ֆինանսատնտեսական ռեսուրսների ձևավորման և բաշխման գործընթացը կանոնակարգվում է ֆինանսական միջոցների կառավարման և մշտադիտարկման ընթացակարգով:

2. Ֆինանսական միջոցների ձևավորման և բաշխման գործընթացի կառավարումը

2.1 «ՀՈՒՄԿ» ԿՀ-ի ֆինանսական պլանի տարեկան նախահաշիվը հաստատում է հոգաբարձուների խորհուրդը՝ ըստ ամիսների հստակեցված դրամական միջոցների մուտքերի ու ծախսերի համապատասխան հոդվածներով:

2.2 Հոգաբարձուների խորհրդի նիստի գումարումից առնվազն 15 օր առաջ՝ «ՀՈՒՄԿ» ԿՀ-ի ֆինանսական պլանը քննարկվում և երաշխավորվում է ՄՈՒՀ-ի Գիտական խորհրդում, որտեղ որոշում է կայացվում Հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ներկայացնել տարեկան ֆինանսական պլանը:

2.3 Գիտական խորհրդում ֆինանսական պլանը քննարկվում է՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի ենթակառուցվածքների առաջարկները, որոնք խորհրդի մեկնարկից առնվազն 30 օր առաջ ՄՈՒՀ-ի ադմինիստրատիվ գծով փոխստորերին/ պրոռեկտորին են ներկայացնում տարեկան ծախսերի գծով իրենց ծախսային պահանջումները:

3. Ֆինանսական ռեսուրսների կիրառելիության և հասանելիության մեխանիզմները

3.1 «ՀՈՒՄԿ» ԿՀ-ում տարեկան ֆինանսական մուտքերը ձևավորվում են ուսման վարձերից, դրամաշնորհներից և այլընտրանքային աղբյուրներից, որոնք ծախսվում են ըստ նպատակայնության՝ հստատված տարեկան ֆինանսական պլանով:

3.2 Ֆինանսական ռեսուրսների մուտքերն ու ելքերը մշտադիտարկման են ենթարկվում վերստուգող հանձնաժողովի կողմից և ծախսային նախահաշվային հոդվածների նկատմամբ հայտնաբերված էական շեղումներն առնվազն 5 օրվա ընթացքում քննարկան առարկա են դառնում ռեկտորատի նիստում:

3.3 Ներքին շահառուները (պրոֆեսորադասախոսական անձնակազմ, վարչական անձնակազմ, ուսանողներ) իրենց հասանելիք ֆինանսական ռեսուրսների անբավարարվածության դեպքերում հետադարձ կապի ճանապարհով այդ մասին տեղյակ են պահում ՄՈՒՀ-ի ռեկտորին, և արդյունքում 10 օրվա ընթացքում ծագած հարցադրումները դառնում են ռեկտորատի քննարկման առարկա: